ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 20.06.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2018/67

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 25.05.2018թ. թիվ 03/26-3/9449-18 գրությամբ «Ջի Էմ Ջեթ սերվիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ԱՍՀՆ սոցիալական ապահովության պետական ծառայության 21.05.2018թ. թիվ ՄՄ/ԿԲ-4/13646-18 գրության հիման վրա, 25.05.2018թ. թիվ 03/26-3/9449-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Ջի Էմ Ջեթ սերվիս» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>«Ջի Էմ Ջեթ սերվիս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Ջի Էմ Ջեթ սերվիս» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/67 ընթացակարգի շրջանակներում 01.06.2018թ. ժամը 11:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է, որ Ընկերության մոտ արձանագրվել է 129 000 ՀՀ դրամի ժամկետանց հարկային պարտավորություն, մինչդեռ Ընկերությունը ուներ մոտ 500 000 ՀՀ դրամի գերավճար: Ընկերությունը սահմանված ժամկետներում և կարգով կատարել է իր հարկային պարտավորությունները, սակայն հարկային նոր համակարգի այլ աշխատանքի հետևանքով Ընկերության մոտ արձանագրվել է պարտք: Ընկերությունը պատրաստվում է համապատասխան հարցում ներկայացնել ՀՀ պետական եկամուտների կոմիտե:

3. **<u>ՀՀ ԱՍՀՆ սոցիալական ապահովության պետական ծառայության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ ԱՍՀՆ սոցիալական ապահովության պետական ծառայությունը (այսուհետ՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 21.05.2018թ. թիվ ՄՄ/ԿԲ-4/13646-18 գրությամբ հայտնել է, որ ՀՀ ԱՍՀՆ սոցիալական ապահովության պետական ծառայության կողմից «ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ԳՀԱՊՁԲ-18/18» ծածկագրով, լազերային տպիչների, հեռապատճենահանող մեքենաների համար տոներների գնման նպատակով կազմակերպվել է գնման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ):

Գնման ընթացակարգի շրջանակում հայտեր են ներկայացրել թվով երկու կազմակերպություն:

Հայտերի գնահատման արդյունքում 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Ջի Էմ Ջեթ սերվիս» ՍՊԸ-ն: ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ մասի համաձայն հարցում է ներկայացվել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների

առկայության վերաբերյալ: Հարցման հիման վրա ստացվել է եզրակացություն, ըստ որի Ընկերությունը հայտը ներկայացնելու (26.04.2018թ) օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց հարկային պարտավորություններ՝ 129 691 ՀՀ դրամ, ինչը գերազանցում է «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված շեմը: Այսպիսով՝ խախտվել է գնման գործընթացի շրջանակում Ընկերության կողմից ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ Ընկերության հետագա մասնակցության դադարեցմանը:

Ընկերությունը 16.05.2018թ. կից գրությամբ Պատվիրատուին է ներկայացրել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի հարկ վճարողների սպասարկման թիվ 6 բաժնի կողմից տրված թիվ 936 տեղեկանքը՝ 05.05.2018թ. դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/67 ընթացակարգի շրջանակներում 01.06.2018թ. ժամը 11:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

<u>4. ՍՑ-ԱՄ-2018/67 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ԱՄ-2018/67 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ ԱՍՀՆ սոցիալական ապահովության պետական ծառայության կողմից ՀՀ ԱՍՀՆ սոցիալական ապահովության պետական ծառայության կարիքների համար կազմակերպվել է «ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ԳՀԱՊՁԲ-18/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով 26.04.2018թ. հայտ է ներկայացրել «Ջի Էմ Ջեթ սերվիս» ՍՊԸ-ն:

2. Ընկերությունը հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ԳՀԱՊՁԲ-18/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

3. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 05.05.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Ջի Էմ Ջեթ սերվիս» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 129 691 ՀՀ դրամի չափով:***

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.05.2018թ. ժամը 10:45-ի նիստի թիվ 3 արձանագրության 3-րդ կետով կայացված որոշմամբ «Ջի Էմ Ջեթ սերվիս» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 25.05.2018թ. թիվ 03/26-3/9449-18 գրությունը, ՀՀ ԱՍՀՆ սոցիալական ապահովության պետական ծառայության 21.05.2018թ. թիվ ՄՄ/ԿԲ-4/13646-18 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 14.06.2018թ. թիվ 01/6.1/32927-18 գրությունը, «Ջի Էմ Ջեթ սերվիս» ՍՊԸ-ի դիրքորոշումը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Սույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը:

ՀՀ ԱՍՀՆ սոցիալական ապահովության պետական ծառայության կողմից ՀՀ ԱՍՀՆ սոցիալական ապահովության պետական ծառայության կարիքների համար կազմակերպվել է «ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ԳՀԱՊՁԲ-18/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով 26.04.2018թ. հայտ է ներկայացրել «Ջի Էմ Ջեթ սերվիս» ՍՊԸ-ն:

Ընկերությունը հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ԳՀԱՊՁԲ-18/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.04.2018թ. ժամը 10:30-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Ջի Էմ Ջեթ սերվիս» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 1-2-րդ չափաբաժինների մասով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի հիման վրա 02.05.2018թ. հարցում է ներկայացրել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե «Ջի Էմ Ջեթ սերվիս» ՍՊԸ-ի վերաբերյալ:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 05.05.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Ջի Էմ Ջեթ սերվիս» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 129 691 ՀՀ դրամի չափով:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.05.2018թ. ժամը 10:45-ի նիստի թիվ 3 արձանագրության 3-րդ կետով կայացված որոշմամբ «Ջի Էմ Ջեթ սերվիս» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը «Ջի Էմ Ջեթ սերվիս» ՍՊԸ-ի ինչպես նաև մի շարք այլ մասնակիցների վերաբերյալ 04.06.2018թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/9969-18 գրությամբ դիմել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին՝ խնդրելով հայտնել, թե մասնակիցների մոտ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունն առաջացել է վերջիններիս գործողությունների և վարքագծի հետևանքով և առկա է արդյոք վերջիններիս մեղքը, թե ստեղծված իրավիճակը

պայմանավորված է հարկային մարմնի կողմից ներդրված նոր համակարգի աշխատանքով:

Ի պատասխան ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի վերոհիշյալ գրության՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն 14.06.2018թ. թիվ 01/6.1/32927-18 գրությամբ հայտնել է, որ ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով, 2018 թվականի հունվարի 1-ից սկսած, միասնական հաշվի միջոցով մարվող հարկային պարտավորությունների մարման նպատակով վճարումները կատարում են միասնական հաշվին: Հարկային պարտավորությունների կատարման վերջնաժամկետները սահմանված են օրենսգրքի համապատասխան բաժիններով, իսկ հարկային պարտավորությունների և դեբետային գումարների հաշվառման կարգը՝ օրենսգրքի 319-րդ հոդվածով: Հարկային պարտավորությունների մարման կարգը սահմանված է օրենսգրքի 325-րդ հոդվածով, իսկ վերջինիս վերաբերող անցումային հարկային հարաբերությունների կարգավորումները՝ օրենսգրքի 456-րդ հոդվածով: Նույն գրությամբ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ը հայտնել է, որ վերոնշյալ կարգավորումների ծրագրային ապահովման ներդրումը կրում է պիլոտային բնույթ, ուստի անհարժեշտ է հաշվի առնել 2018 թվականի հունվարի 1-ից հարկային պարտավորությունների և դեբետային գումարների հաշվառման ու հարկային պարտավորությունների մարման նոր կարգին հարկ վճարողների իրազեկված չլինելու հանգամանքը:

Այսպես, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով՝ համաձայն ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 05.05.2018թ. տրամադրված եզրակացության՝ «Ջի Էմ Ջեթ սերվիս» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 129 691 ՀՀ դրամի չափով, որը գերազանցում է Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված շեմը: Միևնույն ժամանակ ուսումնասիրելով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 14.06.2018թ. թիվ 01/6.1/32927-18 գրությունը, գտնում եմ, որ «Ջի Էմ Ջեթ սերվիս» ՍՊԸ-ն «ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ԳՀԱՊՁԲ-18/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում չի խախտել ստանձնած պարտավորություն, քանի որ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 14.06.2018թ. թիվ 01/6.1/32927-18 գրության մեջ մատնանշված պատճառներով, առկա է Ընկերության իրազեկված չլինելու հետևանքով ժամկետանց հարկային պարտավորություն արձանագրվելու իրավիճակը:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև «Ջի Էմ Ջեթ սերվիս» ՍՊԸ-ի վարքագիծը, գտնում եմ, որ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 25.05.2018թ. թիվ 03/26-3/9449-18 գրությամբ «Ջի Էմ Ջեթ սերվիս» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 02242665) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ